

փորձում քանդակներով երկու մոյթեր, որոնց վրայ հաստատուած էին կրկին վերնախարիսխներ, եւ աւելի վերը՝ ճակատը, մէջտեղէն բաժնուած, ուր ագուցուած էր Լեւոնի զինանշանները կրող վերոյիշեալ զարդածիրը: Կամարին ճիշտ կեդրոնը՝ դրսէն՝ զրուած էր ոսկեզօծ պղնձէ հրեշտակի մը գլուխը: Իսկ երկու կողմը՝ նոյնպէս ոսկեզօծ պղնձէ մէկ մէկ առիւծի գլուխներ:

Բայց աւագ որ այս ամէնը՝ ուրիշ նշանաւոր հնութիւններու բախտին արժանացան, 1789-ին պայթող ֆրանսական յեղափոխութեան զոհ դառնալով ... Իրաւամբ կատաղած ամբոխը կը յարձակէր ամէն շէնքի վրայ, կը կողոպտէր, կը կործանէր ամէն ինչ. ո՛չ եկեղեցի, ո՛չ հնութիւն, ո՛չ պատմական յիշատակարան, ո՛չ արքայական գերեզման, ոչինչ կը խնայէր, այլ բոլորը կը քանդէր, կը կոտորէր բարբարոսաբար: Եւ երբ Ազգային ժողովը իր նոյեմբ. 2-ի նստին մէջ որսչեց եկեղեցականներու բոլոր ինչքն ու ստացուածքը գրաւել ու գնել Ազգին տրամադրութեան տակ, նորահաստատ կառավարութիւնն սկսաւ բոլոր եկեղեցիներն ու վանքերը մերկացնել իրենց թանկագին զարդերէն, արժէքաւոր նիւթերէն, սպասներէն ու հնութիւններէն: Սակայն յաջորդ տարին, 1790 դեկտ. 6, Յիշատակարաններու Մասնախումբ մը կազմուեցաւ, պատմական յիշատակարաններն աւերումէ ու փճացումէ փրկելու նպատակով, որուն իրազօրծման համար Փոքր-Աւգոստինեանց վանքը՝ նկարուած ու քանդակուած յիշատակարաններու իրր պահարան ծառայեցուցին, իսկ Յիսուսեանց վանքն եւ ուրիշներ՝ ձեռագիր ու տպագիր հնութիւններու պահպանման: Մասնախումբին կողմէ 4 յունվ. 1791-ին Փոքր-Աւգոստինեանց վանքին մէջ հաւաքուած ու հաւաքուելիք յիշատակարաններու պահպան կարգուեցաւ վերին աստիճանի բարիխիղճ ու հնութիւններու սիրահար անձնաւորութիւն մը՝ Ազեքսանդր Լընուար(1): Արդ՝ բոլոր արձանները, շիրիմներու գեղաքանդակ կափարիչներն ու այլ այս կարգի քարէ նշանաւոր հնութիւնները տարուեցան այս վանքը. մնացած ոսկի, արծաթ եւ ուրիշ թանկագին հնութիւններն ալ ծախուեցան զրամի վերածուեցան. իսկ արուրէ ու պղնձէ հնութիւնները կրկին ձուլելով՝ թնդանօթ պատրաստեցին անոնցմէ: Բարեբախտաբար արձաններն ու դամբաններու կափարիչներն ընդհանրապէս կճեայ էին, ապա թէ ոչ՝ անոնք ալ արծաթեղէններու եւ կամ պղնձեղէններու գծախառն վիճակին պիտի արժանանային ...

Աւգոստինեանց վանքը բերուած արձաններու եւ պատմական արժէք ունեցող կափարիչներու մասին Լընուարի 1791-92 տարիներուն մէջ բռնած

(1) A. Lenoir, Musée des monuments français, fasc. II, br. 1—3.